

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Մանուկ Արեղյանի բանագիտական, բանասիրական, գրականագիտական, հայագիտական, լեզվաբանական, մանկավարժական վիթխարի, մեծարժեք ու մնայուն ժառանգության մեջ մի գողտրիկ անկյուն կա, որը կապվում է հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասի անվան հետ: Դրանք երեք խիստ ուշագրավ հոդվածներ են գրված տարբեր տարիների՝ երկուսը Կոմիտասի բեղուն գործունեության ժամանակ՝ 1903-ին¹ և 1904-ին², իսկ երրորդը հուշեր են՝ տպագրված 1930-ին, Կոմիտասի ծննդյան 60-ամյակին նվիրված ժողովածուում³: Այս հոդվածներն այսօր խիստ արդիական են և իրենց գիտական ու ճանաչողական արժեքով մշտապես զարդարելու են Կոմիտասի կյանքի ու գործի պատմությունը:

Առաջին երկու հոդվածից պարզ է դառնում, որ Կոմիտասի լուսավոր գործը հոգևոր դասի որոշ ներկայացուցիչների կողմից ոչ միայն չի գնահատվել, այլև ենթարկվել է խստագույն քննադատության: Կոմիտասն այդ քննադատներին չի պատասխանել, նրանց անհիմն հարձակումները հայ ժողովրդին ու հայ եկեղեցուն նվիրված անձի դեմ ինչ-որ առումով իր վրա է վերցրել Մ. Արեղյանը՝ ոչ թե Կոմիտասին մեղադրողներին դաս տալու համար, այլ բացատրելու, թե որքան սխալ են նրանք և լույսն ընդունում են որպես խավար:

1903-ին «Նոր-Դարի» թիվ 110-ում «Հեղինակավոր կարծիքի պահանջ» վերնագրով մի հոդված է գրվել ոմն Ալ-ու ստորագրությամբ, և նույն «Նոր-Դարում»՝ թիվ 119, 120, 121-ում տպագրվել է Մ. Արեղյանի պատասխան հոդվածը, որի խորագիրն է «Կոմիտաս վարդապետ և յուր գործը»:

1896–1899 թթ. Բեռլինում ուսանելուց հետո Կոմիտասը վերադարձել է Էջմիածին ու մեծ եռանդով հայոց մայր եկեղեցու երգչախմբի երգերի ցանկը հարստացրել ժողովրդական տարաբնույթ երգերով, որոնց մեղեդին ինքը մշակել էր ու

¹ Կոմիտաս վարդապետ և յուր գործը. տե՛ս Մ. Արեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 420–430:

² Ժողովրդական երգարան և «Հազար ու մի խաղ». տե՛ս նույն տեղում, էջ 406–419:

³ Հիշողություններ Կոմիտասի մասին. տե՛ս նույն տեղում, էջ 431–439:

դարձրել կատարյալ: Այդ երգացանկում հայրենասիրական ու հոգևոր երգերի կողքին տեղ են գտել ժողովրդական սիրային բարձրաճաշակ երգեր, որոնցով հանճարեղ Կոմիտասը հայ մարդուն կամեցել է առավել կապել քրիստոնեական կրոնի մարդասիրական վարդապետությանը. չէ՞ որ Հիսուսը շարունակ սեր է քարոզում: Այս երևույթը ոչ միայն չի ընկալվել, այլև ենթարկվել է անհիմաստ պարսավանքի: Ահա թե ինչ է գրում «Նոր-Դարում» գրեթե անանուն ընդդիմախոսը. «Ընթերցող, երևի ավելի բնորոշ փաստեր կուզեք. օրինակներ, որքա՛ն կամենաք: Օրինակի համար, Վարդանանց օրն է. ձեմարանում հանդես կա: Պաշտոնական «Նորահրաշ» շարականից հետո բարձր (երևի բարձրանում է – Ա. Դ.). Կոմիտաս վարդապետի խումբը սկսում է «Ժողովրդական տաղեր» կոչված երգերը: Մեկ մեկու ետևից երգվում են. «Էս գիշեր երազ տեսա, յար», «Շեկ քաքուլ տղա», «Աղջի Մարան», «Այ Նազան ըմ, Նազան ըմ», «Էս գիշեր լուսնյակ գիշեր», «Շողեր ջան» և այլն:

Ուրիշ օրինակ. հ. Կոմիտասն աշակերտական համերգ է սարքում. էլ դես ու դեն ընկնել չկա. վերոհիշյալ «ժող. երգերի» թիվը կրկնապատկում, իսկ շատ անգամ էլ եռապատկում է և ահա ձեզ հայկական կոնցերտ վեդարավոր կոմպոզիտորի...»⁴:

Այսօրինակ հողված գրելը Մ. Աբեղյանը համարում է «տխուր երևույթ»⁵: Եվ հենց նմանօրինակ անընդունելի և ոչ գիտական հարձակումները կանխելու նպատակով պատասխան է գրում, որից պարզ է դառնում, թե որքան հոգեհարազատ մոտեցումներ ունեն մեր մշակույթի երկու մեծերը հայ բանահյուսությունը մերոնց և օտարներին ներկայացնելու կարևորագույն խնդրում:

Աբեղյանը ճշգրտորեն բացատրում է, թե ինչու չի կարելի խեղաթյուրել Կոմիտասի նորարարական մոտեցումները եկեղեցական երգչախմբի երգացանկի խնդրում, որոնք իրենց հիմքում ունեն եվրոպականն ու անպայման առաջադիմականը:

Կոմիտասը ոչինչ ցուցադրելու համար չի արել. նրա նվիրումը հայ երաժշտությանն ինքնաձին է ու ինքնաբուխ: Նա կարողացել է այն աստիճան խորանալ հայ երգի գաղտնիքների մեջ, որ համոզիչ ձևով ապացուցել է հայ ժողովրդական երգերի ու հայ հոգևոր երգերի փոխկապակցված լինելը: Մ. Աբեղյանը գրում է. «...Կոմիտասը ոչ թե իրեն «ցույց է տալիս սիրահար», այլ իրոք սիրահար է մեր ժողովրդական խաղերին, և ոչ միայն ժողովրդական խաղերին, այլ նույն չափով և ավելի ևս մեր եկեղեցական երգերին-շարականներին, տաղերին և այլն. նա մինչև անգամ մեր հոգևոր երգերի հիմնական մասը մեր ժողովրդական երգերի մեջ է գտնում և վերջիններից զարգացած է համարում առաջինները: ... Այս քանի

⁴ «Նոր-Դար», 1903, թիվ 110, էջ 3:

⁵ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, էջ 420:

անգամ շեշտել է նա յուր դասախոսությունների մեջ և գործնական օրինակով ցույց տվել, երգելով նախ հոգևոր երգը և ապա ժողովրդականը»⁶:

Կոմիտասի հոգևոր ճաշակը քննադատողը մեծ կոմպոզիտորի մշակած ժողովրդական երգերում տեսել է վավաշտություն և տոփանք, իրողություններ, որոնք իսպառ բացակայում են Կոմիտասի մշակած ժողովրդական սիրերգերում⁷:

Ի հակադրություն հողվածագրի սուտ մեղադրանքների՝ Աբեղյանը հիշում է, թե Վարդանանց տոնի օրը ինչ երգեր են երգվել: Դրանք են՝ «Հիմի՞ էլ լռենք, եղբարք», «Հայ մեռնիինք», «Հայ ապրինք, եղբարք», «Մեզ նոր արև ծագեց», «Միփանա քաջեր»: «Մրանցից ոչ մեկը ժողովրդական երգ չէ և «յար» չէ: ... Իսկ ժողովրդական երգերից նույն օրը, եթե չենք սիսլվում՝ քառաձայն երգվել են «Էսօր ուրբաթ է պաս է», որ սիրո երգ չէ, «Մոկաց Միրզան» և «Միրոս նման էր էն փլած տներ», որ նույնպես սիրո երգ չեն: Ինչու՞ այս մասին լռում է հողվածագիրը...», – նկատում է նա⁸:

Աբեղյանը բարձր է գնահատում Կոմիտասի երաժշտական ճաշակը, որը համապատասխան դրսևորումներն ունի ճեմարանական հանդիսությունների ժամանակ, որոնք պատշաճում են հոգևոր հաստատությանը. ճեմարանի սաները երգում են «Տեր, կեցո՞ւ», «Առավոտ լուսաբեր», «Կոունկ», իսկ ժողովրդական երգերը վերաբերում են պանդխտությանն ու երկրագործությանը, ինչպես, օրինակ, «Ձիգ տու քաշիր, ա՛յ եզր», «Լոռեցու գութանի երգը», «Լուսնակն անուշ», որոնք շատ գեղեցիկ երգեր են: Իր հակաձառության մեջ Աբեղյանը մի քանի անգամ քննադատ հողվածագրի փաստարկումները որակում է որպես «կատարյալ ստություն», որովհետև բոլոր համերգների և հանդեսների ծրագրերը պահվում են ճեմարանի գործերի մեջ, ու դրանք հեշտությամբ կարելի է ստուգել:

Եթե հողվածագրի կարծիքով Կոմիտաս վարդապետն իր աշակերտներին չի սովորեցնում ազգային ցավերի մասին պատմող երգեր, ապա պետք է հիշել, թե որքան կարևոր են ազգային գիտակցության համար Կոմիտասի սովորեցրած «Բամ, փորոտան», «Մտավ արև», «Երբ որ բացվին», «Ազնիվ ընկեր» և նման երգեր, որոնք խորապես ազգային են:

Մ. Աբեղյանը բացատրում է, թե Կոմիտասի ձեռքի տակով անցել են 25.000 տարբեր երգեր, որոնք հաճախ նույն երգի տարբեր վարիանտներն են եղել, և մեծ կոմպոզիտորը, բարձրաձաշակ գրականագետը դրանցից ընտրել է լավագույնները, այնպիսիները, որոնք կարող են ազնվացնել դրանք ունկնդրողներին: Նա վսեմ երգեր է համարում «Լուսնակն անուշ»-ը, «Մրտիկս նման էր», «Ձիգ տու քաշիր, ա՛յ եզր», «Մոկաց Միրզան» և ուրիշներ:

⁶ Նույն տեղում, էջ 423:

⁷ Նույն տեղում, էջ 424:

⁸ Նույն տեղում, էջ 425:

Աբեղյանի կարծիքով ժողովրդի բերանում երգվող մի անմեղ զվարճություն, բոլորովին էլ վնաս չէ ճեմարանի աշակերտների համար և բերում է հետևյալ երեք օրինակները.

Անձրև եկավ շաղալեն,
Ուռի տերև դողալեն,—
Հրես եկավ իմ աղբեր,
Ալ ձին տակին խաղալեն:

Կամ՝

«Ծառիս տակը մանիշակ,
Իմ յարը քանց քե շիշակ,
Օխտ թումանից անց կենամ
Քեզ կանեմ յարիս մշակ»:

Կամ՝

«Ջան գյուլում կասեմ կըշարեմ,
Տոպրակը կածեմ կըկարեմ:
Երկրե-երկիր ման կըգամ,
Քեզնից լավը կըճարեմ»⁹:

Աբեղյանը մարգարեաբար եզրակացնում է, թե ժողովրդական երգերին վերջնական տեսք տվողը պետք է հասկանա և՛ երգի բնագիրը, և՛ երգի մեղեդին ու ուղիղը: Դա բարդ խնդիր է, և այդ խնդրի լուծումը կարող է տալ միայն Կոմիտասը:

Բացառիկ արժեքավոր է «Ժողովրդական երգարան և «Հազար ու մի խաղ» խորագրով հակաճառությունը, որը պատասխան է «Մուրճ» ամսագրի 1903 թ. թիվ 11-ում (էջ 200) տպագրված մատենախոսությանը, որն Աբեղյանը տպագրել է 1904-ին «Արարատ» ամսագրում:

Այս հոդվածը հստակ ձևով ներկայացնում է, թե ինչ վիթխարի ջանքեր են թափել Կոմիտասն ու Մանուկ Աբեղյանը «Հազար ու մի խաղ» հրաշք ժողովածուն ստեղծելու համար, որի մասին գաղափար չունի այն ներկայացնող չարակամ մատենախոսը՝ անորոշ ու տարտամ գաղափար ունենալով հայ ժողովրդական երգերի մասին և բոլորովին չհասկանալով Կոմիտասի ու Աբեղյանի խմբագրած երգարանի իսկական իմաստը¹⁰: Աբեղյանի այս հոդվածը լիովին պարզում է «Հազար ու մի խաղ» ժողովածուի կազմելու բանագիտական սկզբունքները, որոնք լիովին ելակետային են թե՛ բանագետների և թե՛ բանասերների համար:

⁹ Նույն տեղում, էջ 429:

¹⁰ Տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, էջ 406:

1969-ին կոմիտասագետ Ռ. Աթայանը վերահրատարակում է Կոմիտասի և Մ. Աբեղյանի խմբագրած ու հրատարակած «Հազար ու մի խաղ» երգարանի առաջին և երկրորդ հիսնյակները, որին կցում է պերճախոս «Երկու խոսք» նախաբանը: Նա խորհմաստորեն նկատում է. «Այս ոտանավորները «խմբագրվել են» նախապես մշակված եղանակների ձևի և բովանդակության համաձայն, ժողովրդական արվեստի խոր գիտակցությամբ, գրական-երաժշտական բարձր տաղանդով ու նուրբ ճաշակով: Լայն է դրանց թեմաների շրջանակը՝ հայ ժողովրդական կյանքի և պատմության մի յուրատեսակ հանրագիտարան են դրանք...»:

«Հազար ու մի խաղ»-ում խմբագրված ոտանավորները դարձել են հայ դասական բանահյուսության լավագույն նմուշներ, թարգմանվել այլ լեզուներով ու մտել են համաշխարհային ֆոլկլորի գանձարանը»¹¹:

Այս գնահատականը լիովին բխում է այն հոդվածից, որը Մ. Աբեղյանը նվիրել է «Հազար ու մի խաղ» երգարանի կազմելու ու խմբագրելու սկզբունքներին: Նա գրում է. երգարանը խմբագրողը պետք է ի նկատի ունենա.

1. Որ բաղդատությունից ձեռք բերած իմաստալից ու գեղեցիկ վարիանտները պիտի մտնեն երգարանի մեջ:

2. Որ բոլոր կոպիտ զգացումները, գոեհիկ մտքերն ու արտահայտությունները տեղ չպիտի գտնեն երգարանի մեջ:

3. Որ երգերի լեզուն ժողովրդի սովածի սահմաններում հնար եղածի չափ մաքրվի և մոտեցվի գրական լեզվին:

4. Որ անկախ խաղերից կազմված երգերի մեջ տների ընտրությունն այնպես լինի արած, որ ամբողջ երգը քիչ ու շատ ընդհանուր կապակցություն ունենա և իմաստալից բան դառնա»¹²:

Աբեղյանը խստագույնս դատապարտում է «անկոնտրոլ բան սպագրողներին», որոնց անտեղյակության հետևանքով «քննադատության մարզարիտները» դառնում են անհեթեթություն:

Հոդվածում Աբեղյանը դիպուկ ձևով բացատրում է, թե ինչ էական տարբերություն կա բանահյուսական որևէ գործ գրառողի և բանահյուսական գործը որպես երգարան խմբագրողի միջև: Առաջին դեպքում պահանջվում է բացառիկ հարագատություն բանահյուսի խոսքին, երկրորդ դեպքում՝ քննական մոտեցում և ընտրություն տարբեր բանահյուսների պատմածներից: «Եթե մեկը, – գրում է նա, – երգարան է տալիս ժողովրդի ձեռք, այն էլ իրեն ժողովրդի երգերը, ինչպես ամե-

¹¹ Տե՛ս Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգարան, խմբագրեցին Կոմիտաս և Մ. Աբեղյան, Երևան, 1969, էջ 5:

¹² Մ. Աբեղյան. Երկեր, հ. է, էջ 411:

նայն ժողովրդական գիրք՝ ավելի ևս երգարանը պետք է կրթիչ լինի: Այս նպատակի համար պետք է ուրեմն խմբագրելով ազնվացնել երգերը»¹³:

Ժողովրդական բանահյուսությունը գալիք սերունդներին ավանդելիս մեծ մտածողները հեռատեսաբար ցուցաբերում են այնպիսի նրբանկատություն, որը դեռ հին ժամանակների մեծերի մոտ ենք նկատում: Մ. Աբեղյանը «Հայկ և Բել» առասպելի խորենացիական մշակման վերաբերյալ ունի հետևյալ նկատումը. «Հայկի առասպելի այս գեղարվեստական մշակումը միայն, որ կատարված է մեզնից դարեր առաջ, բավական էր նրա հեղինակին փառաբանելու իբրև առաջին քերդոդ, քերդոդահայր»¹⁴: Երբ համեմատում ենք Հայկի և Բելի առասպելի Սեբեոսի ու Խորենացու ներկայացրած տարբերակները, առավել համոզվում ենք, թե որքան իրավացի է Աբեղյանի գնահատականը: Մովսես Խորենացու մշակման մեջ Հայկն անթերի է ու վսեմ, մինչդեռ Սեբեոսի տարբերակում Հայկը Բելին դիմում է հետևյալ կոպիտ խոսքերով. «Շու՛ն ես դու և յերամակէ շանց՝ դու և ժողովորդ քո: Եւ վսան այնորիկ թափեցից իսկ այսաւր ի քեզ զկապարճս իմ»¹⁵: Խորենացին գիտեր, որ թշնամուն վիրավորելն արդեն թուլության նշան է, և հայերի նախահայրը երբեք Բելին չի վիրավորում ու իր ազատատենչությունն արտահայտում է ուշիմության և քաջության դրսևորմամբ:

Աբեղյանը բացատրում է այն բարդ ճանապարհը, որով անցել են ինքն ու Կոմիտասը երգարանը կազմելիս: Փաստորեն, 25.000 հյուսվածքներից ընտրվել են միայն 150-ը: Ընտրվել են այն տարբերակները, որոնցում գրեթե չեն եղել թուրքերեն բառեր: Բերվում են համապատասխան օրինակները.

Արագը հեշտացել ա,
Ճամբեքը կոշտացել ա.
Խաբար տարեք իմ յարին,—
Մուշտարիս շատացել ա:

Ընտրվել է նույն երգի այն տարբերակը, որի մեջ վերջին տողն է եղել «Առնողս շատացել ա»¹⁶: Կամ մեկ ուրիշ հյուսվածքում եղել է.

Ո՞վ է տեսել սիրած յարը մոռանա,
Ով մոռանա, **ջուխտ** աչքերով քոռանա:

Ընտրվել է այն տարբերակը, որը երկրորդ տողում ունի զուտ հայերեն բառեր.

¹³ Նույն տեղում, էջ 410:

¹⁴ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Գ., Երևան, 1968, էջ 318:

¹⁵ Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 50:

¹⁶ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, էջ 415:

Ով մոռանա, երկու աչքով կուրանա¹⁷:

«Հիշողություններ Կոմիտասի մասին» հոդվածն աչքի է ընկնում մի առանձին ջերմությամբ, որը Մ. Աբեղյանն ունեցել է Կոմիտասի անձի և գործի նկատմամբ: Նրա հուշերից իմանում ենք, որ մեծ կոմպոզիտորը լավ է իմացել հանրահաշիվ ու երկրաչափություն և ճեմարանում երբեմն վարել է այդ առարկաների քննությունը¹⁸: Նկարագրվում են Կոմիտասի բեռլինյան երեքամյա ուսուցման տարիները, որոնց ընթացքում նա մեծ եռանդով ու կարճ ժամկետում փորձել է կատարելապես հմտանալ երաժշտական արվեստի մեջ: Բեռլինից վերադառնալուց անմիջապես հետո Կոմիտասը հենց ճեմարանի աշակերտներից կազմել է երգեցիկ խումբ և սովորեցրել նրան բազմաձայն երգել: «Նրա խմբի հանդես գալը մեծ խրախճանություն էր ունկնդիրների համար ու մի հաղթանակ ժողովրդական երգի»¹⁹:

Այս հուշագրության մեջ Աբեղյանը վերստին հավաստում է այն փաստը, թե երբ Կոմիտասը հոգևոր երգերից հեռացնում էր օտար ազդեցությունը, պարզ երևում էր, որ դրանց և ժողովրդական երգերի մեղեդին գրեթե նույնն է: «Եվ Կոմիտասն այն կարծիքին էր, թե մեր հոգևոր երգերի եղանակները մեր ժողովրդական երգերի եղանակներն են»²⁰:

Մ. Աբեղյանը հետաքրքիր փաստեր է հաղորդում Կոմիտասի կենցաղավարության, սովորությունների, բնավորության գծերի վերաբերյալ: Նա փաստում է, թե Կոմիտասը բնապաշտ էր, սիրում էր մենակ զբոսնել անտառում, լսել թռչունների ճովողյունը, բնության ձայները²¹ և շարունակ խոսել ժողովրդական երգի մասին: Նա պատրաստում էր հատուկ թերթիկներ, բաժանում աշակերտներին և խնդրում դրանց վրա գրել տարբեր բնակավայրերի բանահյուսական դրսևորումներն ու այդ ձևով կուտակում էր հսկայական նյութ ու ապա անցնում դրանց դասակարգմանը և մշակմանը:

¹⁷ Նույն տեղում, էջ 416:

¹⁸ Նույն տեղում, էջ 431:

¹⁹ Նույն տեղում, էջ 434:

²⁰ Նույն տեղում:

²¹ Գու՞ցե Կոմիտասը հետևում էր Մարկավագ Իմաստասերի «Բան իմաստութեան...» քերթվածում եղած այն մտքին, թե՛ բանաստեղծը կարիք ունի սովորելու սարյակի ճովողյունից և պետք է երաժշտության հարցերում հետևի նրան:

Ե՛կ ուսո՛ ինձ, զի ծանեայց, կիսակատար իմաստակիս:

Մի՛ պատճառեր զանբանութիւն, դու յօղաձայնըդ վերծանող,

Անյօղ ձայնիւ վարդապետեա՛ և ըստացի՛ր զիս աշակերտ...

(տե՛ս Հայ դասական քնարերգություն, հ. I, Երևան, 1986, էջ 13):

Կոմիտասը եղել է շատ հյուրընկալ. հյուրերին մեծ հաճույքով մատուցել է իր իսկ ձեռքով պատրաստած սուրճն ու թեյը, ըստ որում՝ թեյի մեջ գցել է վարդի թերթեր:

Ի դեպ, Կոմիտաս վարդապետի հյուրընկալ լինելու վերաբերյալ առանձին հաճույքով գրում է ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը, որը 1909-ին եղել է Էջմիածնում, հանդիպել է Կոմիտասին, երկար զրուցել հենց նրա սենյակում ու վայելել նրա հյուրասիրությունը: Կոմիտասը Ֆ. Մակլերին նկարագրել է, թե ինչպես են ծնվում գեղջկական երգերը, և ինչպես է ինքը դրանք գրառել: Այսպես, 1906-ին Վարդավառի տոնին նա այցելել է Ալեքսանդրապոլից 28 վերստ հեռու Հատիջ գյուղը, որը Արագածի փեշին է: Երիտասարդ գեղջուկները, նոր ամուսնացածները պարում էին և հանպատրաստից հորինում երգեր: Նրանք պարում ու երգում էին ողջ գիշերը՝ մինչև լուսաբաց: Պարողների միջից լավագույն երգողը կատարում էր ժողովրդական երգը, իսկ պարող երգչախումբը կրկնում էր.

Ամա՛ն Թե՛ լլն, Թե՛ լլն,
Սիրուն Թե՛ լլն, Թե՛ լլն:

Մակլերի կարծիքով՝ Կոմիտասը մեծարժեք գործ է կատարել, շարունակ շրջել է հայկական գյուղերը, գրառել հայ ժողովրդական երգերը: Նա առանձնացրել է հայկական երաժշտությունը հարևան ժողովուրդների երգերից՝ ներկայացնելով հայկական երգի ողջ հմայքը: Մակլերը Ա. Չոպանյանի թարգմանությամբ ներկայացնում է Կոմիտասի մշակած մի շարք երգեր՝ «Ձիգ տուր, քաշի՛ր...», «Գարուն ա, ձյուն ա արել...», «Չինար ես, կռանալ մի...» և այլն: Հայագետը Կոմիտասին ներկայացնում է որպես հյուրընկալ, սրամիտ և աշխույժ անձնավորություն, որն անմնացորդ նվիրված էր իր ազգին²²:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Կոմիտասն ունեցել է բազում երազանքներ, որոնք մնացել են անկատար: Նա երազել է «Մասնա ծոեր» հայկական հերոսական էպոսի թեմայով գրել օպերա, երկար ժամանակ ձգտել է վերծանել հայ միջնադարյան տաղերի խազերը՝ ձայնանիշերը և այդ բնագավառում հասել է որոշակի հաջողությունների:

Այս մասին կարևոր փաստեր է հաղորդում վերստին Ֆ. Մակլերն իր «Երաժշտությունը Հայաստանում» հետազոտության մեջ: Նա Կոմիտասից իմացել է, որ Հայաստանում հոգևոր երգերի երաժշտությունը ձեռագրերում նշվել է խազերով՝

²² Տե՛ս Ա. Դոկուխանյան. Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011, էջ 176–177:

ձայնանիշերով, որոնք թվով 85-ն են: Կոմիտասն ասել է, թե ինքը հասկացել է այդ խազերից 54-ի նշանակությունը, իսկ 31-ինը դեռ չգիտի²³:

Միջնադարյան խազագրության գաղտնիքները վերծանելու ճանապարհին Կոմիտասը հասել է հսկայական նվաճումների: Այդ մասին վկայում է Ն. Թահմիզյանը՝ գրելով, որ Կոմիտասը ճշգրտորեն ընթերցել է Գր. Նարեկացու չորս տաղերի մեղեդիները. «Այս իմաստով հայկական միջնադարյան տաղերի կոմիտասյան լավագույն ընթերցումներից են նաև, մասնավորապես Գրիգոր Նարեկացու մի քանի տաղերի վերականգնումները»²⁴:

Մ. Աբեղյանի հուշերից պարզ է դառնում Կոմիտասին կաշկանդող բազմաթիվ հանգամանքներ: Նա, ինչպես բոլոր հանձարները, զգում էր, որ ծնվել է առավել մեծ թռիչքի և առավել լայն ասպարեզում գործելու համար: Սակայն նրա հնարավորությունները՝ նյութական և քաղաքացիական, շատ նեղ էին: Այդ մասին գիտեին նաև հայ առաջադեմ մտավորականները: Հ. Թումանյանն իր «Գրականության ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածում, որը տպագրվել է 1916 թվականին, հիշեցնում է, թե Վիկտոր Հյուգոն ընդամենը 15 տարեկանում արժանացել է Ֆրանսիայի Գեղարվեստի ակադեմիայի խրախուսանքին, իսկ 16-ում՝ Տուլուզյան ակադեմիայի մրցանակին: Մինչդեռ «Կոմիտաս վարդապետի պես մի անձնավորություն, նույնիսկ Եվրոպայում էլ հիացմունք առաջ բերելուց հետո էլ, չի կարողանում իր հայրենիքում մի դաշնամուր ձեռք բերի կամ հնարավորություն՝ գավառները ճանապարհորդելու և կատարելու մի գործ, որ միայն ինքը կարող է կատարել, և որն էնքան պատիվ է բերում ամբողջ ազգին...»²⁵:

Տեղին է հիշել, թե ինչպես Վ. Տերյանը «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում հիշեցնում է երիտասարդ մի հրապարակախոսի այն խոսքը, «... որ եթե Այվազովսկին հայ իրականության մեջ գործեր, նա պիտի ծխական դպրոցի, իսկ լավագույն դեպքում թեմական դպրոցի նկարչության ուսուցիչ լիներ, ոչ ավել»²⁶:

Էջմիածնի ձեր միաբանները սիրում էին Կոմիտասին և նրանցից Հովհաննես Էպիսկոպոս Շիրակունին հազար ռուբլի է նվիրում, որպեսզի կոմպոզիտորն իր համար մի ռոյալ գնի:

1905-ին Կոմիտասը մեկնում է Եվրոպա՝ նախ Գերմանիա, ապա Փարիզ՝ հայ հարուստներից որևէ աջակցություն ստանալու և իր գործերը տպագրելով ընդհանուր ճանաչման արժանանալու համար: Սպասելիքները չեն իրականանում: Պոլսից նրան ինչ-որ հեռանկարների խոստումներ են գալիս, և նա 1910 թ. տեղա-

²³ Նույն տեղում, էջ 128:

²⁴ Ն. Կ. Թահմիզյան. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Երևան, 1985, էջ 112:

²⁵ Հո վ հ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, 1995, էջ 242:

²⁶ Վ. Տերյան. Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1961, էջ 258:

փոխվում է Պոլիս: Հետաքրքիր է, որ Աբեղյանը նրան խորհուրդ է տվել միանգամից չտեղափոխվել Պոլիս, այլ ժամանակավորապես: Կոմիտասը չի լսել այդ խորհուրդը, և պարզ է, թե ինչ հետևանք ունեցավ նրա Պոլիս վերադառնալը:

Իր հուշերի վերջում Աբեղյանն արտահայտում է այն համոզմունքը, որ Կոմիտասի երաժշտությունը հարատև կյանք է ունենալու: Նա իրավացի է. այսօր Կոմիտասի անունը մտել է 1988-ին Նյու Յորքում լույս տեսած աշխարհի նշանավոր կոմպոզիտորների կենսագրական բառարան, որտեղ կան նաև Արամ Խաչատրյանի ու Էդվարդ Միքոյանի անունները:

МАНУК АБЕГЯН О КОМИТАСЕ

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Резюме

В богатейшем и ценнейшем научном наследии крупного арменоведа Манука Абегаляна есть небольшой раздел, связанный с именем гениального композитора Комитаса. Это три очень интересные статьи, написанные в разное время. Сегодня они весьма актуальны и благодаря своей научной и познавательной ценности являются венцом изысканий, посвященных истории жизни и творчества Комитаса. В двух из этих статей говорится об абсурдной критике в адрес Комитаса, на которую он даже не отвечал. Этот ответ был дан и научно обоснован Мануком Абегаляном. Абегалян оставил также интересные воспоминания, в которых Комитас открывается читателю как человек и артист.

MANUK ABEGHIAN ABOUT KOMITAS

AELITA DOLUKHANYAN

Summary

A small part of the richest and most valuable scientific legacy of the prominent armenologist Manuk Abeghian is devoted to genius composer Komitas. These are three very interesting articles written at diverse periods. Today they are more than topical, owing to their scientific and cognitive value are the crown of investigations devoted to the life and creation of Komitas. In two of these articles the author speaks about the absurd criticism addressed to Komitas to which he even did not answer. The answer was given with well-founded scientific arguments by Manuk Abeghian. Abeghian also left interesting memoirs in which the reader discovers Komitas as a man and an artist.